

ՈՒՂԵԳՆԱՅՈՒԹԻՒՆ Ի ՀԱՅՍ

Պ. ՄԱԳՍ ԹԻԼՄԱՆԱՅ ԻՐԱՆԻ ԱԳԻՏԻ ՅԱՄԻ 1872


Այնչաւ տարւոյն վերջերճ բացայայտա-
րոյս (1871) թուականաւ 'ի Լիւթիա հրա-
տարականցաւ նոր ճանապարհորդութիւն մը,
կամ Բերտցը 'ի Կովկաս, 'ի Պարսկաստան
և յԱսիական թուրքաստան, ինչպէս կ'ա-
նուանէ 'ի Հեղինակին՝ Գերմանացի ազնուա-
կան իրաւագէտն թիլման. որ և, ինչպէս 'ի
յառաջդրանին կը խոստովանի, այնքան ան-
գամ դիտուած և ստորագրուած աշխար-
հաց և տեղեաց վրայ շատ նոր բաներ չի
կրնար բնել. այլ սակայն յայտնի կը ցու-
ցնէ փորձ և գիտական աչք ունենալը
և ստոյգ տեսութիւնը: Որոյ համար ալ ա-
ռաջուց Կովկասեան գաւառաց վրայօք
գրուածոց լաւագոյնները քննել էր (վասն
դի առաջ միայն այս կողմէրը քալելու միտք
ունէր): և գրքին վերջն ալ կը նշանակէ
Կովկասի, Պարսկաստանի և Ասիական
թուրքիոյ վրայ հրատարակեալ լաւագոյն
գրքերն և աշխարհացոյցները: Մեր գիտունն
է միայն Հեղինակին մեր Հայաստան աշ-
խարհի մէկ մասին մէջ ըլլած ընթացքը
(որո Ուղեգնացութիւն անուանեցինք) հա-
մառուել. թողլով առաջին մասը, որ կը
սկսի 'ի 10 օգոստ. 1872, յօտեսայ և 'ի
քաղաքաց Գլխու, ուսկից կ'անցնի յարե-
ւելեան ծովակերս Պոնտոսի, և 'ի Բոզի քա-
ղաքէ նոր շինուած երազագնաց ճամբով
կու գայ 'ի Փոթիայիս, ուսկից բնիկ Կով-
կասեան քանի մը գաւառաց այցելութիւն
ընելէն ետե՛ւ՝ կ'անցնի յԱխալցիխէ գաւառ,
և անկից 'ի Շիրակ Հայոց. այս և մերձա-
կայ քանի մը Արարատեան գաւառաց մէջ
երկու շաբաթ պտտելէն ետե՛ւ՝ կ'երթայ 'ի
Տփլիս, և անկից յարեւելեան Կովկաս, 'ի
վեր երթալով մինչև 'ի Դարբանտ, 'ի որոր
կասալից ծովուն եզերքը մինչև 'ի Պաքու.
անկից կտրելով զԱտրպատական, քննելով
գլխալիւժ, կը մտնայ 'ի Թուրքիա, կ'անցնի
ընդ Մուսուլ մինչև 'ի Հիւլէ. յետոյ յարե-
ւուստ դառնալով կը կտրէ զանապատն
Ատրեստանի, Միջագետաց և Ատրուոց,

այն միայնութեանց հրաշացոյցիչ Պալմի-
րայի աւերակները գննելով. կ'անցնի 'ի
Դամասկոս, 'ի Պերսեթ, ուր կը հասնի 1873
տարեգլխին, անկից կ'երթայ 'ի Յուպէ,
ուր շոգեման կը տանի գինքն մինչև յԱ-
լեքսանդրիա և 'ի Գահիրէ. ուր և կ'աւար-
տի ուղեգնացութեան գիծն, զոր նշանա-
գրած է աշխարհացոյց տախտակի մը վրայ.
որոյ հետ կան 'ի գիրսն քանի մը փայտա-
գիծ պատկերք ալ, թէ մարդկան թէ քա-
ղաքաց և շինուածոց:

Որքան ալ այսպիսի երազ ընթացքէն
մենք մեր հայրենեաց համար նոր և միծ
գիւտ կամ տեղեկութիւն մը չէինք կրնա-
լուալ, այցելութեան տարութիւնն իսկ բա-
ական համարեցանք 'ի հետաքրքրութիւն.
որոյ հետ կը գտնենք և տեղ տեղ խոհական
դիտողութիւններ, և զգայուն ու հաճոյա-
կան տեսութիւններ քանի մը բնական և
շինուած տեղեաց, թող անձանց վրայ ըրած
խորհրդածութիւնը: Թէպէտ մեր ընկիւքն
է աւելի կամ պակաս համառօտութիւն մը
իր 40 կամ 50 երես գրածին մեր աշխար-
հին վրայ, այլ կ'իմացնենք ընթերցողաց
որ իբրե թարգմանաբար և իր գէմբով կը
գրենք, առանց բան աւելցնելու, այլ մա-
նաւանդ 'ի բաց թողլով. յիշեցնելով ալ
նորէն, որ սեպտեմբեր ամսոյ միջին մասին
է ուղեգնացութիւնն 'ի Հայրենիս մեր, 'ի
վերայգրեալ ամին 1872:

Վրաց և Հայոց և Հիմա Ումանեանց և
Ռուսաց երկիրներուն սահմանագլուխ մ'է
Արփա-չայ գետն, որոյ աղբերականց մօտ
հասայ յԱխալքալաքէ գալով, և գիւերեցի
'ի Շիրթէփէ գիւղ, ուր խազախաց սահմա-
նապահ հանգրուան մը կայ. բոլոր Կովկա-
սի սահմանաձայրերը՝ իբրե շրթայալար
պահակասունք կամ զօրանիսաք կան խա-
զախաց իրարմէ իբրե 8 մղոն 'ի հեռաւո-
րութեամբ, և տեղին համեմատ՝ տասնէն
ինչուան 30 հոգի: Արփա-չայ գետն իբրե
60 մղոն գէպ հարաւ իննելով՝ խառնուի

1 Streifzüge in Kaukasus, in Persien und in der Asiatischen
Türkei, von Freiherr Max von Thielmann, Das
pzig, 1873.



յերասխա. ժամանակաւ իր հովիւն շատ սպառաքել եղած է, բայց հիմա ոչնչոյնպէս. իսկ Շիբեփէէ մինչև յԱլեքսանդրապօլ (Նիւմիթ) միջոց երկիրն մերկ է ամայի է, ճամբան ալ քարուտ. երկիրն բարձրութեան պատճառաւ այս եղանակին ալ տաքն սաստիկ չէր: — Որհասարակին հասանք 'ի քաղաքն, և շատ զարմացանք կոկիկ պանդոկ մը գտնելնուս, որոյ տէրն էր Կրոս առնուամբ Շուապ մը. լաւ ճաշ մը և յերևանէն եկած բնտիր խաղողն և քանի մը ժամ հանգիստն զմզմ աղէկ կազդուրեցին:

Ալեքսանդրապօլ՝ որ առաջ Նիւմիթ կոչուէր, Էտրուսէի գաղնագործներէն վերջը սկսաւ չէննալ Ռուսաց ձեռք անցնելով. Ախուրեանի մօտ է և 5080 ոտք (անգղիական) ծովու երեսէն վեր: Իր ամենէն նշանաւոր բանն է եւրոպական ոճով շինուած և բոտ Ասիացոց անտիկ բերդն, զոր Ռուսք կանգնեցին իբրեւ ընդգիմակաց Ղարսայ բերդին: Ռարիշ նշանաւոր շինուած շէնքն, բաց 'ի քանի մը Հայոց եկեղեցիներէն, որոց գլխաւորը՝ որ գեռ լճնեցած չէր, Հայք մեծ խնամքով իրենց հին ճարտարապետութեան ձևով, ոճով և քանդակներով կը շինէին, կարմիր սև և գորշագոյն քարերով, (բոտ չափոյ կաթուղիկէին Անոյ): Անմիջապէս քաղերին մօտ տափակ բլրի մը վրայ շինուած եկեղեցիէ մը լաւ կ'երևայ ջրմակայ տեսարանն, թէ և լերկ բարձրատափի երկիր մը, չոր լեռներով չլրջապատած. միայն քաղերին մէջ կայ ծառ: Հարաւային արևելեան կողմէն յերեան եկաւ Արագած լեռն, զոր՝ միշտ Արարատայ ընկեր լսելով և 15400՝ բարձր, կարծէի թէ անոր նման և ծիւծապատ բրգաձև մը պիտի տեսնեմ. բայց գտայ տգեղ տձև գիրաւոր լեռ մը, և իր հուշակեալ եօթն գագաթներն ալ քանի մը ցցուած ժայռեր, որոց միջոց քիչ մի ձիւն կար: Իսկ այն եկեղեցին ուսկից կը դիտուի չորս կողմը, ունէր հայկական ոճով գերեզմանական խոշոր խաչքարեր և նստրապիտ արձանազոյն թիւններ, որք հին հայերէն տառից պէս վայելուչ չէն քարի վրայ փորագործուելու:

Երբ քաղաք դարձանք՝ վարձու կառք մը բռնեցինք, երկրորդ օրը երթալու յԱնի և նոյն երկրորդ դառնալու պայմանաւ. քաղաքապետն ալ խոստացաւ իր զինուորներէն մէկը տալու մեզի ընկեր և թարգման: Առանձին շատ վտանգաւոր էր այս ճամբորդ

գութիւնս. հիմա անվտանգ կրնայ մարդ կառքով ալ երթալ Օսմանեանց սահմանը (ուր է Անի). և թէ և շինուած ճամբայ չկայ, բայց գետինի մերկութիւնն և պընդութիւնն և շատ բլուրներ չըլլալն՝ կը դիւրացնեն կառուց ընթացքն ալ. միայն թէ շատ անձրեւ չըլլայ կամ Ախուրեանն և իր օժանդակ Գարասու գետակն ողողած չըլլան: — Կանուխ առաւօտուն Հայ կառավար մը չորս ձիով հանդիստ կառքով մը պատրաստ գտուեցաւ. քաղաքապետն (Բրիսգալ) քաղաքապետութեամբ հետեւեալ եկաւ մինչև 'ի սահմանագլուխը, և հօն յանձնեց զմեզ Օսմանեան սահմանապահին, որ մեզի ընկեր տուաւ երկու լաւ հրացանաւոր զինուորներ. մեր քաղաքապետին տուած ոստիկանութեան զինուորն ալ՝ որ Հայ էր, աղէկ զինուած և քաջ ձիաւոր մ'էր, և առսարէն ու թուրքերէն լաւ կը խօսէր. ճամբուն վրայ թուրք զինուորացի հետ ձիարշակի մրցանքը վաւեր կը զըռաւանցներ: Թա՛մբա՛ն ինչուան 'ի կէսն (20 վերստ) ձիւն և շատ շնորհքով չէր, բայց գետինն բարեբեր պիտի ըլլար. որովհետեւ գիւղերն բազմաթիւ են և մեծկալ, թէպէտ ասոնք ալ դրսուանց անշուք: Ինչուան 'ի Պաշ-Շէօրէկէլ աւան՝ որ Շէօրէկէլ գաւառի գլխաւոր շէնքն է, Ախուրեանի քովէն էր ճամբանիս. հօն պարզ ձևով բայց ամուր բերդի մ'աւերակք իմացուցին մեզի որ Հայոց թագաւորանիտ քաղերին մօտ ենք: — Ագիւղիւմ գիւղին քով անցանք Ղարսայ գետէն, Կարմիր վանքի և Մէվլէկի աւերակ բերդին քով ալ Մէվլէկի-Հայ գետակէն: Ինչուան հօս ճամբան լաւ էր. տակէ անդին սկսաւ անմիտիթար ամայութիւն մը. աջ կողմէն քարուտ բլուրներ, լերկ լեռներ, որոց ստորոտը կանգնած է Ղարս, ձախ կողմէն անձև Արագածն. իսկ Արարատը տեսնելու ակնկալութիւն չունէինք. բայց Գարապալէ գիւղի մօտ երկու բլրոց միջոց բարձրաւանդակէ մ'անցնելուս՝ յանկարծ բան մ'երեցաւ, որ իր փայլերն ամայի մեծակերտութեամբն անման է:

Փարսախա մը տարածութեամբ առաւար դաշտ մը, որուն ծայրը մեծադիր քաղաք մը, պարիսպներով աշտարակօր, եկեղեցեօք և պալատներով, բայց ամենն ին անմարդաձայն և միայն քար. անոր ետեանց բրգաձև կը բարձրանան քարաժայռ գագաթներ լեռանց՝ որք Երասխայ

հովիտն արեւելեան Եփրատէն կը բաժնին, որոց միջին կ'որոշուէր Կողբայ աղաւա- նից քովը լեռի լեռն. և աւելի հեռու դէպ 'ի հարաւային արեւելք' կոնածն ձինսագա- զաթն Արարատ՝ վահանկան տեսլամբ, զոր չէին ծածկեր միջմանկալ բարձրու- թիւնք, թէ և 60 մղոն հեռու էր: Այս ան- հատնում հանդարտութեան և ամայու- թեան մէջ երեցած՝ երբեմն հզօր թագա-ւորութեան մը փառաշարժ և տիրական մայրաքաղաքի երեւոյթն՝ այնպիսի տպաւո-րութիւն մ'ազդէր վրաս, որ և ոչ յետոյ Բաբելոնի և Պալմիրայի մէջ այս աստիճան զգացումն ունեցայ միայնութեան 'ի վե-րայ մեռցորդաց անցեալ ժամանակաց:

Դուռով կարելով մնացեալ միջոցը՝ հա-սանք աւերակաց մօտ զինուորաց պահա-կատան, որք զինաշարժութեամբ ողջունե-ցին զվեղ, և ուղեցին մէկ տեղ գալ թէ հե-տաքննութեամբ և թէ մեր պաշարները կրե-լով. իսկ կառավարին պատուիրեցինք որ պատրաստ ըլլայ յայ երկիւղն զմեզ դարձե-նելու 'ի քաղաք: Այրապաց վրած տեղէ մը ներս մտանք, և նախ մայր եկեղեցւոյն քով շուքին տակ համարձակեցանք նախաճաշիկ մ'առնուլ: — Անի այնքան հետաքննական բաներ ունի, որ ես տեսուածներուն հա-զիւ վերիվերանց տեղեկութիւն մը կրնամ տալ. աւելին ուզողն կրնայ գտնել Բիդ-դէրի աշխարհագրութեան և Ապիւնի յա-տուկ գրուածոց մէջ. զժգողագրաբ գեռ Անյո լուստախոպ տեսարանին հանուած էն. բայց 'ի Տփղիս Ուէսլէյ (Westley) լուսա-գրողն խոստացաւ որ մօտերս երթայ յԱնի և լուսագրէ: Անոյ պայծառութիւնն կը սկսի Գ. Աշոտոյ օրէն, որ յամի 961 հզօր թագաւորութեան մ'աթոռ ըրաւ զԱնի, յորում 100,000 բնակիչ կար:... Բնական ամուր դիրք մ'ունի, և եռանկիւնի ձև. ա-րեւելեան հարաւային կողմէն ժայռք հա-րիրաւոր ոտք կը բարձրանան Ասուրեանի եղբրէն, որոյ միւս նման քարածայռ ե-զերքը Թուրաց պահակատուն մը կայ. ա-րեւմուտքէն նոյնպէս խոր յատակ մը գե-տոյ, թէ և ցամաք. իսկ հիւսիսային արե-ւելեան կողմէն որ 'ի գաղտը կը նայի՝ կրկին հսկայածն պարիսպք կանգնած են 'ի պաշտ-պանութիւն քաղաքին: Հարաւային անկիւ-նը ուր ցամբած գետոյն բերանն խառնուի յԱխուրեան, գետինն հարիւր ոտք բարձր է, և անշուշտ հօն է միջնաբերդն, յա-

տուկ պարիսպով պատած, որոյ մնացորդք դեռ կան, և շատ զարմանալի երեցած են Հէմլիցըն Անգղիացոյ. հիմա միայն երկու աննըշան պղտիկ եկեղեցիք կան. բայց մէ-կուն մէջ նշանաւոր սեան խոյակ մը կայ, որ ուրիշ եկեղեցւոյ մէջ ալ կ'երևի, և է քանդակ արձուղ՝ գառնուկ մը ճանկած: Փաղքին տունեցին թէ և կործանած են 'ի ժածէ, բայց դեռ անոնց հետքն և փողոց-ներու գծերն կը նշմարուին. եկեղեցիք, մկրիթք և պարիսպք բերդին՝ դեռ կը դի-մանան տարերաց բռնութեան դէմ, և ու մանք այնպէս նոր ու չէն են՝ որ դեռ նոր շինուած կարծուի:

Շինուածոց մէջ գլխաւոր և ճարտար վայելչութեամբ նշանաւոր ոճն է՝ երեք գունով քարերու շարուածք մը. մէկն սև մթին, մէկն աղիւսանման կարմիր, միւսն գոգ գեղին. քարինքն ալ կարծեմ թէ տոփի (taf) տեսակէ ըլլան, բայց չեմ կրնար զայս հաստատել: — Միջնաբերդին մօտ և Ա-խուրեանի բարձր գետափին վրայ կայ մկրիթ մը, ութանկիւնի սուր միւսարէյով թէ և փորքի, այլ շինուածքն ալ դրուածքն ալ վայելուչ: — Անոր մօտի շինուածքն է մին-չև 'ի գմբէթն ամբողջ մնացեալ կաթուղի-կէն (մայր եկեղեցին). լատինական խաչի ձևով է, բայց բիւզանդական ճարտարապե-տութեամբ. պատշաճութեամբ և մեծու-թեամբ մասանց քանդակադարձոց շատ հաճոյ է աշտոյ. և ահա ասոր հաւատարն է Ալեքսանդրապոլի մէջ նոր շինուած եկե-ղեցին: Զարդերով համադրուածքն ունի շատ հարուստ չէ Անոյ կաթուղիկէն, այլ կրնանի վրաց գեղեցկագոյն աւերակ եկեղեցեաց. միայն թէ անոնց մէջ խաչքանդակներն ա-ւելի նշանակութիւն մը կը ցուցնեն քան հօս, ուր այնքան պարուրապտոյտ և ան-կրնական ձևեր ունին՝ որ չափազանց և ցուցանքաւոր իմն կ'երևին: Արտաքին ճոխ ճարտարպետութեան պակսութիւնը կը լե-ցնեն բազմաթիւ հայերէն արձանագրու-թիւնք, որ քաղաքին պատմութեանը լոյս կու տան:

Փաղաքին հիւսիսային արեւելակողմը՝ ուր պարիսպքն դէպ յԱսուրեան կ'իջնեն, ամե-նէն նշանաւոր շէնքն կայ, բոլորչի եկեղեցի մը, Բիդայի մկրտարանին ոճով. մէջը դեռ կ'երևին որմնակարներ, բիւզանդական ընտիր ժամանակի գործ: — Փաղաքին այլ և այլ կողմերը ցրուած մնացեալ եկեղեցիք և

մատրոնք՝ ասոնց չեն հաւասարիր ոչ մեծութեամբ և ոչ ամբողջութեամբ, սակայն ունին շատ գեղեցիկ և հետաքննելի մասեր¹։ Այսպիսի է փոքր մատուռ մը ոչ շատ հեռու ՚ի պարսպաց, նաղաշքար ձեղուտով (մուսայիզ), պաղանձաւած և կամարներով և շատ շնորհայի դրուագներով — Ուրիշ մերձաւոր եկեղեցի մը բիւզանդացի բարձրաքանդակ մ'ունի, արժանաւոր փոխադրելու յետոյական թանգարան մը², և կը ներկայացնէ զԱլեքստուհն Տիրամօր՝ որ աթուակի մը վրայ նստած կը ներկայանայ։ — Ուրիշ եկեղեցւոյ մը, մօտ ՚ի միջնաբերդն, կողմնական մատրոնք սրահակով մը բաժնուած են, գուգակ սիւններով՝ որոց խոյակքն յոնիական ոճով եղած կ'երևան, և որոց միջոց երրորդ խոյակածն զարդ մ'ալ աւելցուցեր է ճարտարագետն՝ բոլոր շինուածքին ծանր ոճոյն համեմատելու համար։

Պալատն քաղաքին արևմտակողմը Ախուրեանի խորածորին վրայ է, և թէպէտ մեծաւ մասամբ կործանեալ, այլ որմոց մնացորդքն կը յայտնեն որ մեծագործ չէնք մ'էր. դուռն գեղեցիկ շրջանակ մ'ունի բարձրաքանդակ արաբիկ, քառակուսի խորշերով, որ Ալեմպարայի արաբացի դրուագները կը յիշեցնէ. այլ ցաւալին այն է՝ որ շրջակայ բնակիչք ինչուան ուր ձեռքերին հասեր է՝ աւրըշտրեք են զայս։ Քաղաքին աւերակաց գրեթէ ճիշդ մէջ տեղը կ'ամրառնայ 100 ոտք բարձր աշտարակ մի տւերեալ մկղթի. ղեռ սանդղոց ստործաններն ալ կեցած են և կարելի է վեր ելնել. միայն ծածփն քարերն տեղ տեղ ընկած ըլլալով՝ անվստ չէ։ — Պարսպքն որ քաղքին հիսխակողմը կ'ամբառնան՝ հրակայած են, և ղեռ բաւական չէն կեցած. երկու կարգ են, միջոցն իբր 10 քայլ. երեք երեք դուռ ունին, բայց ճիշդ իրարու դիմացէ դիմաց չեն. արևմտեան ներքին դուռն պատին վրայ խորաքանդակ առիւծ մը կայ ՚ի ղնացս, քաղքին կամ անոր տիրոջ նշան։ Պարսպաց աշտարակներն ալ պահպանաց համար շինուած փոքրիկ սենեակներ ունին։

¹ Bieten jedoch eine Fülle höchst interessanter Details.

² Կը հաճինք քանդակին փայլելութեանը, այլ ոչ փոխադրութեան. միայն թէ անաւեր մնայ ՚ի տեղն։

Երեք ժամու շուրի Անոյ մնացորդները քննելէն վերջը՝ ուղեցիր արևմտեան ձորէն յետ դառնալ, որոյ քարալիանց վրայ անթիւ փորած անձաւներ կան, բազմաթիւ ժողովրդեան բնակարան, որոցմէ մեծաքոյններն հիմա անտուն հովուաց և իրենց հօտից ապաստանարան են. այս հովիւներն շատ բարբարոս կ'երևէին, և առանց զէնքի անոնց մօտենալն խոհեմութիւն չերևիր։ Օսմանեանց պահակատունը երթալով և քննելով՝ զարմացայ բարեկարգութեանը և մաքրութեանը. զէնքերին ալ տեսայ, Արմերիկայէն նոր եկած կրկնակ հրացաններ, որոց գործածութեան կերպն ալ թուրքաւորէն վիմագործութեան տպուած էր։ — Երեկոյեան ժամն հիշէին ճամբար ընկանք դառնալու յԱլեքսանդրապոլ. և առաջին անգամն էր որ ճանցայ Աղլապուրիկ թանձր վերարկուաց յարգը, երբ այս բարձրաւանդակ երկրիս վրայ ցուրտ սառուցիչ հովը զգացի։ Ինչուան ՚ի գետն Ղարապաշողութեամբ եկանք, բայց կէս ճամբէն ետև ձիոց մէկուն տկարութեան պատճառաւ դժարացաւ կառաց ընթացքն. վերջապէս կէս գիշերուն մտանք ՚ի քաղաքն և ՚ի պանդակ մեր։

Ալեքսանդրապոլէն յերևան երթալ ուղեւով՝ երկու ճամբայ կար. մէկն սուրհանգակի ճամբան՝ Տիփմանի վրայօք, միւսն՝ չիտակ Սարտարապատի վրայով, որ կայսերական ճամբայ կ'ըսուի, Նիոքապոս կայսեր անկէ անցնելուն համար. բայց անկէ վերջը երեսէ թողուած և աւրուած է. սակայն մերն ալ այս ճամբան ընտրեցինք, չորս ձիով կառք մը վարձելով՝ չայ կոտու վարով։ Անտամիւրերի Ալին երկու ճամբայ, դէպ ՚ի հարաւ երթալով, և շատ մը մանր ու կէս ծածկուած գիւղերէ անցնիլով՝ եկանք ՚ի Պոզադ-բէսէն՝ ՚ի ստորոտ Ուրագածայ. ուր կառավարն կ'ուղէր գիշերն անցընել. բայց մենք ստիպեցինք առաջ քելլ. սակայն յիրան ճամբան շատ գէշ էր Արագածայ ստորոտքը. և եթէ կառքերինս աղէկ հաստատուն չինուած չըլլար՝ չէինք կրնար անվտանգ մնալ. ճամբուն վրայ տեսայ երկայն կարաւան մը բռնակիր եղանց, զոր ուրիշ տեղ չեմ տեսած, և չեմ ալ կարծիք որ սովորական ըլլայ եղանց բռնակիրութիւնն. ասոնք կը բերէին Ալեքսանդրապոլէն իբր 50 մղոն հեռու կողմէ քարաղը, և կը տանէին ՚ի սահման

Թուրքաց. փայտէ համեմոխ մ'երկու կողմ մէկ մէկ կտոր իրր 1 1/2 կնիդինար կշարժ աղի կտոր զրուած էին: Անյիշատակ ժաւանակէ վեր այս աղաւանդն Հայաստանի և կողկասայ պաշար կը մատակարարէ:

Գիշերանց հասանք 'ի Մաստարա գիւղ, և իջնանցանք Ռուս մարտապահի մը բնակարան. որ Եւրոպացի մը տնաներուն ուրախութենէն գրեթէ յիմարեցաւ. վասն զի անընկեր միայնակ էր հօն, և շատ կը գանգատէր թէ տեղւոյն խեղճութենէն թէթաթարաց գէշութենէն. իր մինակ միտթարանքն էր մեծկակ բրգոտ բռնարտեան շուն մը, որ իր տիրոջ նման չէր դադրեր ուրախութեան նշաններէ. և զիտուած է որ այս կողմերս երբ եւրոպացի մը կ'երևի թաթարաց շունք անգաղար կը հաջնէ և կը միմլուան, իսկ Ռուսաց և խաղախաց շունք կ'ուրախանան:

Յիշորդօ օրը ճամբանիս աւելի լաւ չը գտանք. անոր համար կառքը թողլով՝ ակըսանք ոտորով երթալ. հապիւ քանի մը քայլ ըրեր էինք երբ ճամբուն վրայ մեծ գայլ մը տեսանք առանց վախի կեցած. հրացաննիս հետերնիս չըլլալով չկրկնէր զարնել. — Չորս մղոն երթալով հասանք թալին քաղաքաւանի ընդարձակ աւերակաց. ուսկից մղոն մ'ալ հեռի դէպ յարեւելք՝ կայ մեծ եկեղեցի մը նման Անոյ եկեղեցեաց, քովն ալ ուրիշ աւերակներ. քիչ մ'ալ հեռու մեծ պալատի մ'աւերակք կան, կամարակապ ցած սրահներով, զոր ոմանք կարաւանատուն կարծեր են: Հիմակուան (Նոր) թալինն՝ ուր հասանք, 50 ոտք բարձր պարըստով պատած է, և հայկական բերդ մ'ալ ունի, որոյ քով կայ փոքրիկ աւերակ եկեղեցի մը: Ատենօր թալինայ տիրող խանի մը զաւկին տունը իջնանցանք, որ իր հարց հարստութիւնն ալ իշխանութիւնն ալ կուրուած էր:

Թալնայ և Սարտարապատի միջոց 16 մղոն երկայն և 20 մղոն լայն քարուտ անապատ մը կը տարածուի. այնքան ամալի, որ Բաքելնիք և Պալմիրայի միջոց արաբական անապատն անգամ ասկէ չէն գտայ՝ Թուփերով, որ հօս բնու չկան. այս ամուր տեսպանին մէկ հատիկ միտթարանք էր Արարատայ կերպարանքն, որ երթալով կը բարձրանար ուրիշ լեռանց մէջ. և երբ հասանք 'ի Սարտարապատ, թէ և դեռ 50 մղոնի չափ հեռու էինք՝ այլ անմիջապէս

մեղի մօտ կ'երևար: Հեռուէն Սարտարապատ ժանեոր պարսպօք պատեալ մեծ բան մը կ'երևէր. այլ երբ մօտեցանք և մտանք՝ տեսանք կաւակերտ և վրիլլած պատերով մեծ գիւղ մը. մէկ հատիկ գեղեցիկ տեսարանն էր արեւելեան անկիւնը, պողատու ծառոց մէջ ականակիտ աղբիւր մի. մէկ կողմէն տեսարանն Արարատայ և իր արեւմտեան լեռանց գօտոյն, միւս կողմէն գիւղին դիւղնած պատերն, որոց շուքին վրայ ուղտոց կարաւանք հանգչած էին. եւ տեւիս ալ Արագածայ ամալի լեռնօտքն. — Յետ հանգիստ առնելոյ՝ ձիանք լծել տըւինք և փութացուցինք յէջմիածին հասնելու, այլ հարկ եղաւ Գարասուի պահակատան մէջ գիշերն անցընել, և առաւօտուն կանուխ հասնիլ հօն:

Էջմիածին գրտուանց աւելի բերդի մի կը նմանի քան վանաց: Երբ ներս մտանք՝ մեծ մարդասիրութեամբ ընդունեցան զմեզ և տարին 'ի խուց կրօնաւորի մը, որ միայն հայերէն և թուրքերէն գիտնալով՝ հարկ եղաւ որ իմ Ալի ծառայս թարգմանութիւն ընէ. քանի մը վայրկեան վերջը տարին զմեզ պատրաստուած սենեակը. ուր առաջին աչքի զարնող բանն եղաւ մեղի պատին վըրայ կախած փայտանիք պատկերն Գուրիշմուս կայսեր և Սէտանայ պատերազմին, որ անգղիարէն պատկերազարդ օրագրէ մը հանուած էին, այլ չեմ գիտեր ո՞վ բերեր էր: Մեղի տրուած սենեակքն վանքին նոր շինուած թեւին մէջ էին, և եւրոպական կարգաւ պատրաստուած: Քիչ մի սպասելէն ետեւ եկաւ զմեզ ընդունելու Գէորդ Վարդապետ Սուրէնեանց Արքեպիսկոպոսն, զոր Կաթողիկոսն իր մամաւային զիւղազնացութեան ատեն տեղապահ դուրեր էր: Այս Վարդապետս որ այսօր և երկրորդ առտուն վանքին մէջ տեսնելու արժանաւոր բաները մտապիւր ցուցուց, 'ի Տիգրիս կրթութիւն առած է. համարձակ կը խօսէր ռուսարէն, քիչ մ'ալ փռանկիւրէն և գերմաներէն կը հասկընար. իսկ իր պաշտօնակցաց մեծ մասն միայն հայերէն և թուրքերէն գիտեն. ինքն շատ ուսնակ էր, և մեծ հոգ ունէր Հայոց ժողովրդական դպրոցաց համար համառօտ դասագիրքեր հրատարակել, պատմական և աշխարհագրականներ ալ թարգմանելով, յորոց մինչև 'ի մօտ ատեններս զուրկ էին տեղացի Հայ մանկունք: Շատ կը գանգատէր վար-

ծարանաց զարգացման անխնամ վիճակին վրայ, որով իր հռանդուն և յաջողակ ազգայինն յետամնաց կ'ըլլային. կը ճանչնար Մխիթարեանց արգասաբեր գործունէութիւնն 'ի գիտութիւնս, միայն կը ցաւէր անոնց պապական ըլլալուն 'ի Հատադոյս:

Էջմիածնի Կաթուղիկոսին Հոգեւոր իշխանութեան տակ կան Գրիգորեան Հայր իւրեւ չորս միլիոն 'ի Ռուսիա և 'ի Թուրքիա, և բազմաթիւ գաղթականք 'ի Պարսկաստան, Հնդկաստան և յԵւրոպայ: Իր իշխանութիւնն պապական իշխանութեան նմանութիւն մ'ունի. բայց աւելի տնտեսութեան կերպով, կրօնական նորութիւններէ զգուշանալով: Ունի արքեպիսկոպոսներ, եպիսկոպոսներ և ուրիշ եկեղեցականներ, որք երբեմն իր քովը կը մնան, երբեմն զանազան թեմեր կ'երթան 'ի տեսչութիւն, և միշտ կ'զորոնին Հետ յարաբերութիւն ունին: Ռուսաց կառավարութեան Հետ սերտ կապակցութիւն ունին յեկեղեցականս, և ամենայն կարեւոր փոփոխութիւն մը կայսերական ուրազով կ'ըլլայ: Էջմիածնի Հոգեւորականաց զխաւոր զբաղմունքն է Ռեփորոյն վերաբերեալ թէ՛ Հոգեւոր թէ՛ Ժամանակաւոր վերաբերեալքը Հոգայք. այս ետքիններս ոչ անհրաժեշտ քանակութեամբ եկամուտ մը կը բերեն. բայց բուն Հոգեւոր գործունէութիւնն առաջ է: Վանական կարգերն շատ խիստ չեն. և բաց 'ի տնական պարզութենէն՝ կրցողն ուզածին պէս կ'ապրի: Զգեստանին Հայկական միանձնաց ձեռնէ, որ իմ տեսանքերուս մէջ ամենէն արժանաւորն է:...

Էջմիածնի չըջափայլքն Հայաստանի ամենէն պտուղներ մասանց մէկն են, Սրագածու Հիւսիսային արեւելեան ստորաւունքը ըլլած և իրասխայ կցորդ ջրատուններով ոռոգուած: Վանքն մօտ 'ի բազմամարդ և վաճառաշահ աւանն Վաղարշապատ՝ ունի երկու զատ եկեղեցիներ ալ, որոց մէկը 'ի Թուրքաց Իւշքիլիսէ կոչուի. նշանաւոր են Ներսէս կաթողիկոսի փորել տուած մեծ քարէ աւազանն ջրոց և տնկել տուած պլուզատու և անպտուղ ծառաստանք:... Վանաց պարսպաց միջոց շատ մը շէնքեր կան. մէջ տեղն է կաթուղիկէն, զանազան դարերու շինութիւն, որ բոլորն մէկէն շատ վայելուչ մը չերեկր. գլխաւոր մասն՝ ինծի երեցաւ Ը գարու շէնք. յունական խաչի ձև ունի, բայց ետքի ժամանակի յաւելեալ

շինութեամբք այլափոխեալ է. աւերի տրիս եղծն ալ են անցեալ դարուն պարսկային ոճով պատեհուն զարդանկարքն: Տեսութեան արժանի շատ կտորներ կան, Հաբուստ, բայց արուեստական մասամբ անարժէք. զխաւորքն են, 'ի բեմին երկու զահաւորակք ութանկիւնի Հովանոցաւ և չորս սիւնակօք, և շատ Հին ժամանակի գործ են: — Եկեղեցոյն մօտ գտնութիւն մէջ բնեռաքանդակ արձանաքար մը կայ յԱրմաւրաց աւերակաց բերում. Վարդապետն բնաւ թէ Հին Պարսից լեզուով է, ինձ այնպէս չերեցաւ, այլ կարծեմ թէ Պ. Մորտգման ստուգած ըլլայ:

Ժառանգաւորաց վարժարանն ալ ինձ ցուցին, որ շատ աշակերտ չունէր. երեցցին մեզի իրենց Հին շարականներէն, որոց եղանակն ունէր պարզութիւն և վստահաձայնութիւն մը, թէ և քիչ մը խիստ և ողբական: Զմե՛ գիտեր կղերիկոսարանի Համար թէ ուրիշ վարժարանի Համար նոր չէնք մը սկսուած էր չըջապարսպէն դուրս: — Գրատունն շատ Հոշակուած է, և կ'ըսուի որ զեռ չյայտնուած գանձեր ունի, մանաւանդ Հայոց միջին դարուց պատմութեան վերաբերեալ. ես միայն մանրանկարներ տեսայ և ձեռագիրքեր՝ որոցմէ լան չէի Հասկոնար: Տպագրարանն ալ Հիմա լանուկ է, ռամկական Հայերէն գրքեր և Արարատ կոչմամբ օրագիր մը Հրատարակելով:

Վերոյիշեալ Վարդապետէն զատ ուրիշ կրօնաւոր մ'ալ տեսնուեցաւ. Հետո, որ քիչ մը ուսուսարէն գիտէր. և Հայերէն խօսելուն առնէ՝ գիտեցի լեզուին խտտաձայնութիւնը, որ թուի թէ կակուղ բաղաձայններ չունի:... Կերակուրնիս երոգական ոճով պատրաստուած էր, բայց օրն ուրբաթ ըլլալով՝ իրենք մեզի Հետ չկերան. իսկ գինին՝ որուն Համար շատ գովելատ լսած էի, Համով չգտայ, այլ ըսելով և անփորձ, շատ աննման կախէթի գինեաց:

Իրկրորդ օրը Էջմիածնէ Հրաժարելու ատենս, պարտք մ'ալ Համարեցայ ներումն ինձ դրելու որ Հետս մահմետական մը, Սլիսպասաւորս, բնակեցուցի: Սուրէնեանց գիս անմեղապիւրով ըսաւ, թէ շատ անգամ ժամերգութիւնս պաշտօնանց ատեն աւելի Հետարգրելի Թաթարք կու գան յեկեղեցին՝ քան ջերմեռանդ Հայք. և թէ մահմետականք ալ մեծ պատիւ կ'ընծայեն Էջմիածնի: Կը շարունակուի: